	50531140/34	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի մշակույթի տան նախասրահի և դահլիճի վերանորոգման աշխատանքների և կահավորման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	150000	1	**150,0**
	50531140/35	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի հուշարձանի տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	47000	1	**47,0**
	71631140	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն և Մեծամոր գյուղերի մշակույթի տների շենքերի տեխնիկական վիճակի զննության ծառայություն /2025թ նախագծեր/	ՄԱ	դրամ	340000	1	**340,0**
	50531140/36	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի նոր հասարակական շենքի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	400000	1	**400,0**
5112	50531140/37	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի այգու կառուցման և հուշարձանի տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	143000	1	**143,0**
	71241200/21	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի այգու կառուցման և հուշարձանի տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	1485000	1	**1485,0**
	71241200/22	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի հուշարձանի տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	495000	1	**495,0**

22

5134	71241200/30	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի մշակույթի տան կահավորման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	1500000	1	**1500,0**
	71241200/31	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի մշակույթի տան կահավորման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	850000	1	**850,0**
	71241200/32	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի մշակույթի տան նախասրահի և դահլիճի վերանորոգման աշխատանքների և կահավորման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	1500000	1	**1500,0**
	71241200/33	ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի նոր հասարակական շենքի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություն /2025թ նախագծեր/	ԳՀ	դրամ	4000000	1	**4000,0**
		2. Աշխատանք					
5113	45611200/1	Արաքս համայնքի Ջրառատ գյուղի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ /2023թ սուբվենցիա -համայնք/	ԳՀ	դրամ	42356382	1	**42356,4**
	45611200/2	Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ /2023թ սուբվենցիա -համայնք/	ԳՀ	դրամ	36919935	1	**36919,9**
	45611200/3	Արաքս համայնքի Գայ գյուղի մշակույթի տան 2-րդ հարկի վերանորոգման աշխատանքներ /2023թ սուբվենցիա -համայնք/	ԳՀ	դրամ	35685000	1	**35685,0**
	45611200/4	Արաքս համայնքի Արաքս գյուղի մշակույթի տան 2-րդ հարկի վերանորոգման աշխատանքներ /2023թ սուբվենցիա -համայնք/	ԳՀ	դրամ	19068000	1	**19068,0**
		Ընդամենը -0823 ծրագիր					**147029,6**

23

Գնումների համակարգող՝ Լ.Աղաջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2024 թվականի N 828-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-033-0095-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, Ա. Իսահակյան 4 փողոց, 2/1 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 30
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2024 թվականի N 827-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-056-0048-0000 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Հայկաշեն, 3-րդ փողոց, 23/1 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 30
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2024 թվականի N 826-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Հայանիստ գյուղում գազատարի անցկացման շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով շինարարության թույլտվություն ստանալու համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել h/h 900435101226 հաշվեհամարին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 30
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 հուլիսի 2024 թվականի N 825-Ա

ԳԵՂԱՄ ԳԱՐՈՒՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Գեղամ Գևորգյանի 2024 թվականի հուլիսի 22-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի բնակիչ Գեղամ Գարուշի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող /04-033-0106-0023/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 28,8քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 0,9քմ աստիճանահարթակը, 0,9քմ արտաքին մակերեսով զուգարանը, 9,3քմ արտաքին մակերեսով թռչնանոցը, ինքնակամ բացված 1 դուռը և 1 պատուհանը՝ ընդամենը 2 միավոր՝ համաձայն «Սևան Թովմասյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2024XNVQVX:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1422 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ նշանակության շինությունների 1քմ-ի համար 853,2 Հայաստանի Հանրապետության դրամ, յուրաքանչյուր ձևափոխված պատուհանի համար 1422 Հայաստանի Հանրապետության դրամ. 1422*29,7քմ=42233 /քառասուներկու հազար երկու հարյուր երեսուներեք/ Հայաստանի Հանրապետության դրամ,

853,2*10,2քմ=8703 /ութ հազար յոթ հարյուր երեք/ Հայաստանի Հանրապետության դրամ, 1422*2=2844 /երկու հազար ութ հարյուր քառասունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝ 42233+8703+2844=53780 /հիսուներեք հազար յոթ հարյուր ութսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 53780 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Գայ գյուղի N900325165158 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 30
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 824-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 29. 07.2024թ.-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը, համաձայն սույն որոշման հավելվածի:
2.Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3.Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետին Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
29 հուլիսի 2024թ.-ի
N 824-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի

Հ Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Արմեն Զավենի Դարբինյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
2	Լիլիթ Նորիկի Մուշեղյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
3	Վահրամ Սարգսի Հարությունյան	Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	Արաքսի համայնքապետարան
4	Պետրոս Արամայիսի Ավագյան	Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ	Արաքսի համայնքապետարան
5	Գայանե Զավենի Մնացականյան	Ավագանի	Արաքս համայնքի ավագանի
6	Հայարփի Ռազմիկի Բունիաթյան	Արաքս համայնքի Ջրարբի գյուղի դպրոցի ուսուցչուհի	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 29
Արաքս համայնք

29/07/2024 1:59:23 PM
ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ ԱՀ-3.2-24)

Հանձնաժողովի կազմը

Պետրոս Ավագյան
Հաստատությունը՝ Արաքսի համայնքապետարան
Պաշտոնը՝ Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ

Վահրամ Սարգսի Հարությունյան
Հաստատությունը՝ Արաքսի համայնքապետարան
Պաշտոնը՝ Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Արմեն Զավենի Դարբինյան
Հաստատությունը՝ Արմավիրի մարզպետարան
Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Լիլիթ Նորիկի Մուշեղյան
Հաստատությունը՝ Արմավիրի մարզպետարան
Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Գայանե Զավենի Մնացականյան
Հաստատությունը՝ Արաքս համայնքի ավագանի
Պաշտոնը՝ Ավագանի

Հայարփի Ռազմիկի Բունիաթյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Արաքս համայնքի Զրարբի գյուղի դպրոցի ուսուցչուհի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 823-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.02.2020թ. թիվ 02-Ն հրամանը և 29.07.2024 թ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Արաքսի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեխնիկական տեխնոլոգիաների բաժնի պետ՝ Մարիա Ազատյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի
29 հուլիսի 2024 թ.-ի
N 823-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՔՍԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Արայիկ Գրիգորի Հակոբյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
2	Խորեն Յուրիի Սարուխանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի
3	Վահրամ Սարգսի Հարությունյան	Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	Արաքսի համայնքապետարան
4	Գայանե Զավենի Մնացականյան	Ավագանի	Արաքս համայնքի ավագանի
5	Հայարփի Ռազմիկի Բունիաթյան	Արաքս համայնքի Ջրարբի գյուղի դպրոցի ուսուցչուհի	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024 թվականի հունիսի 24
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 822-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող Բավական Վահանի Տոնոյանին սեփականության իրավունքով պատկանող 04-086-0009-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրարբի, Հ. Թումանյան փողոց, 10/2 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 821-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող Անահիտ Ղազարի Առուստամյանին սեփականության իրավունքով պատկանող 04-086-0003-0023 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրարբի, Գ.Նժդեհի փողոց, 15 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 820-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՊԵՏՐՈՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ, 163-րդ և 164–րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18–րդ կետը և Պետրոս Ավագյանի 2024 թվականի հուլիսի 29–ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Ավագյանին տրամադրել 2024 թվականի ամենամյա արձակուրդի մի մասը՝ 12 /տասներկու/ աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի օգոստոսի 2–ից նույն թվականի օգոստոսի 19-ը ներառյալ :

2. Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Ավագյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վահրամ Հարությունյանին:

3. Պետրոս Ավագյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 20–ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 819-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158–րդ հոդվածով, 161–րդ հոդվածի 2–րդ մասով, 164–րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 19–րդ կետը և Նարինե Դավթյանի 2024 թվականի հուլիսի 25–ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական Նարինե Դավթյանին տրամադրել 2024 թվականի ամենամյա արձակուրդն ամբողջությամբ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի օգոստոսի 1-ից 2024 թվականի սեպտեմբերի 3-ը ներառյալ:

2. Նարինե Դավթյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական Արա Նավասարդյանին:

3. Նարինե Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի սեպտեմբերի 4-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 818-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՆԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՍԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 31–րդ հոդվածի 9–րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ և 164–րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18.1–րդ կետը և Արսեն Հովսեփյանի 2024 թվականի հուլիսի 26–ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական ղեկավար Արսեն Հովսեփյանին տրամադրել 2024 թվականի ամենամյա արձակուրդն ամբողջությամբ՝ 24 /քսանչորս/ աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի օգոստոսի 1–ից նույն թվականի սեպտեմբերի 3-ը ներառյալ :

2. Ակնաշեն գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող նշանակել Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական Արա Նավասարդյանին:

3. Արսեն Հովսեփյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի սեպտեմբերի 4–ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 հուլիսի 2024 թվականի N 817-Ա

ԱՐԱՐԱՏ ՎԱՍԻԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով քաղաքացի Արարատի Հարությունյանի 2024 թվականի հուլիսի 23-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի բնակիչ Արարատ Վասիլի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /04-013-0049-0001/ կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 150,1քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 96,4քմ մակերեսով ծածկը, 7,53քմ արտաքին մակերեսով խորդանոցը, 7,05քմ մակերեսով պարիսպը՝ համաձայն «Արդա Բաղրամյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2024J8FEWW:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1028 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար 616,8 Հայաստանի Հանրապետության դրամ, 1028*150,1քմ=154303 /մեկ հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր երեք/ Հայաստանի Հանրապետության դրամ, 616,8*110,98քմ=68452 /վաթսունութ հազար չորս հարյուր հիսուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝

154303+68452=222755 /երկու հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր հիսունհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 222755 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Առատաշեն գյուղի N900325153162 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2024 թվականի N 816-Ա

ԳՈՀԱՐ ԻՇԽԱՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ (ՕԳՆԱԿԱՆ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 14–րդ ենթակետով, հիմք ընդունելով Գոհար Իշխանի Կիրակոսյանի 2024 թվականի հուլիսի 17–ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 26-ի N 28 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի Հ. Մկրտչյան փ. 54տ. հասցեի բնակիչ Գոհար Իշխանի Կիրակոսյանի /ծնված՝ 21.02. 1958թ., անձնագիր՝ AU0297373, տրված 04.06.2021թ.–ին 057–ի կողմից/ նկատմամբ սահմանել պատրոնաժ (օգնական)՝ պատրոն նշանակելով իր որդուն՝ Արտյոմ Հովհաննեսի Պողոսյանին /ծնված 21.03.1999թ., անձնագիր՝ AT0445492 տրված 30. 08.2019թ.–ին 057–ի կողմից/:

2. Արտյոմ Հովհաննեսի Պողոսյանին վերապահել ի շահ իր մոր՝ Գոհար Իշխանի Կիրակոսյանի, առանց հատուկ լիազորագրի, կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 29

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2024 թվականի N 815-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 6 ՀԱՆԳՈՒՅՑԱԼԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48–րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 03-ի N 39 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ Արաքս համայնքի թվով 6 /վեց/ հանգուցյալի ընտանիքի ֆինանսական աջակցություն տրամադրել՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 26
Արաքս համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի

Ղեկավարի 2024 թվականի հուլիսի 26-ի

N 815-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

N	Անուն, ազգանուն,հայրանուն	Հասցե	Անձը հաստատող փաստաթուղթ	Գումար ՀՀ դրամ
1.	Փոթորիկ Կարոյի Մուրադյան	գ. Գայ	AU0436930	50.000
2.	Դանիել Աշոտի Սերգեյան	գ. Զրարբի	AR0676146	50.000
3.	Մարտիրոս Գուրգենի Հովսեփյան	գ. Մեծամոր	AU0501596	50.000
4	Սերոբ Կարապետի Նազարյան	գ. Ապագա	AR0635075	50.000
5.	Էդվարդ Արտաշեսի Պետրոսյան	գ. Զրառատ	AP0495927	50.000
6.	Հայկ Ռուդիկի Մինասյան	գ. Զրառատ	ն/ք 012703294	50.000

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ, ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ,
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ,
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱ ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2024 թվականի N 814-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Գայ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.587 հա հողամասի ծածկագիր՝ 04-033-0408-0001 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2024 թվականի N 813-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Գայ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.2407 հա հողամասի ծածկագիր՝ 04-033-0409-0006 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 812-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող Էդուարդ Սերգեյի Շիրինյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0017-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Ռաֆֆու փողոց, 53 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 25
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 811-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-056-0029-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Հայկաշեն, 13-րդ փողոց, 2 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 25
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 810-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող Վիկտորյա Գևորգի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-086-0005-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրարբի, Ղ.Աղայան փողոց, 1-ին փակուղի, 6/2 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 25
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 809-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Գայ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.2513 հա հողամասի ծածկագիր՝ 0408-0001 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 25
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2024 թվականի N 804-Ա

ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Գայի բժշկական ամբուլատորիա», «Արաքսի բժշկական ամբուլատորիա», «Ջրառատի բժշկական ամբուլատորիա», «Ապագայի բժշկական ամբուլատորիա», «Գրիբոյեդովի բժշկական ամբուլատորիա», «Խորոնքի բժշկական ամբուլատորիա», «Առատաշենի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, միաձուլման արդյունքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արաքսի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արաքսի բժշկական ամբուլատորիա » համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին N40-Ա որոշման 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Գայի բժշկական ամբուլատորիա», «Արաքսի բժշկական ամբուլատորիա», «Ջրառատի բժշկական ամբուլատորիա», «Ապագայի բժշկական ամբուլատորիա», «Գրիբոյեդովի բժշկական ամբուլատորիա», «Խորոնքի բժշկական ամբուլատորիա», «Առատաշենի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արաքսի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտերը՝ համաձայն NN 1,2,3,4,5,6 և 7 հավելվածների:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Գայի բժշկական ամբուլատորիա», «Արաքսի բժշկական ամբուլատորիա», «Ջրառատի բժշկական ամբուլատորիա», «Ապագայի բժշկական ամբուլատորիա», «Գրիբոյեդովի բժշկական ամբուլատորիա», «Խորոնքի բժշկական ամբուլատորիա», «Առատաշենի բժշկական

ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքված միաձուլման պայմանագիրը.

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2024թ. հուլիսի 23
Արաքս համայնք